



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԻՆՉ ՏԵՍԱՆՔ ՄԵՆՔ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության վերաբերյալ սովետալինական պայմանագրի ստորագրման 5-րդ տարեդարձի առթիվ կազմակերպված հանդիսավոր նիստին մասնակցելու առիթով մեզ շին մասնագետներին բախտ վիճակվեց այցելել Երևան:

Ընդամենը երեք օր մենք մնացինք այդ հիանալի քաղաքում և այդ կարճ ժամանակամիջոցում այնքան շատ ու լավ բան տեսանք այնտեղ, որ դժվար է բոլորը գրի առնել լրագրային մի փոքրիկ հոդվածում:

Գեղեցիկ ու հմայիչ է Երևանը՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի մայրաքաղաքը: Սովետական կառավարությունը, ստեղծագործ հայ ժողովուրդը ջանք ու եռանդ չեն խնայել այն բանի համար, որ Երևանը դառնա սովետական երկրի առաջնակարգ, հույակապ, կուլտուրական տեսք ունեցող քաղաքներից մեկը:

Հայ ժողովրդի անսպառ եռանդը, նրա ձիրքն ու տաղանդը, նրա հմտությունն ու վարպետությունը մենք տեսանք ու զգացինք Երևանի արդյունաբերական ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում, շինարարական հրապարակներում, համերգային դահլիճներում ու մարդաշատ փողոցներում...

Մենք տեսանք Վ. Ի. Լենինի մարմարակերտ հուշարձանը, Ի. Վ. Ստալինի հույակապ մո-

նումենտը և հիացանք այդ անզուգական հրաշալիքներով:

Մենք եղանք Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատում, կաբելի և էլեկտրամեքենաշինական գործարաններում և զգացինք, թե աշխատանքի արտադրողականության բարձրացման ու արտադրանքի ավելացման գործում ինչպիսի խոշոր հաջողությունների կարելի է հասնել առաջավոր տեխնիկայի արմատավորման շնորհիվ: Մեր ուշադրությունը գրավեց այն երևույթը, որ այդ բոլոր գործարաններում աշխատում են մեծ թվով կանայք ու աղջիկներ, որոնք, տիրապետելով իրենց գործի տեխնիկային, տղամարդկանցից ետ չեն մնում արտադրության մեջ: Մենք զգացինք այն մեծ հայրենասիրությունը, որը նրանց աշխատանքային սխրագործությունների է մղում: Հանուն կոմունիզմի արագ կառուցման:

Մենք անցանք քաղաքի ասֆալտապատ փողոցներով ու հրապարակներով, դիտեցինք Երևանը զարգարող բազմահարկ շենքերը և հիացանք հայկական ճարտարապետության կոթողներով: Առանձնապես մեծ հիացմունք պատճառեց մեզ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի հույակապ շենքը: Այդ թատրոնում մենք ունկրդեցինք հայ կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան, որը մեզ հնարավորություն տվեց պատկերացնելու նախասովետական շրջանի հայ գյուղի սովորույթները,

գաղափար կազմելու հայկական լիահնչյուն ու դուրեկան երաժշտության մասին:

Մեզ հիացմունք պատճառեց նաև քաղաքի առողջապահական հիմնարկներում, բաղնիքներում և հասարակական սենյակի օբյեկտներում տիրող կարգն ու կանոնը և մաքրությունը:

Այո՛, գեղեցիկ է Երևանը: Հայ շինարարների մոլորակը զրնգում են անդադար, և Երևանը՝ արևաշող Հայաստանի մայրաքաղաքը, օրեցօր ավելի գեղեցիկ ու հիասքանչ է դառնում:

Մենք մասնակցեցինք սովետա-չինական պայմանագրի ստորագրման 5-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստին և սեփական աչքերով տեսանք այն բուռն հետաքրքրությունն ու ջերմ սերը, որ հայ ժողովուրդը ցուցաբերում է ժողովրդական Չինաստանի, չին մեծ ժողովրդի նկատմամբ:

Մենք հայ ժողովրդին սրտագին շնորհակալություն ենք հայտնում ջերմ ընդունելության և հյուրընկալության համար, ցանկանում ենք նրան ամենայն հաջողություններ՝ Սովետական Հայրենիքի բարգավաճման, խաղաղության ամրապնդման համար մղվող պայքարում:

Թող է՛լ ավելի ամրապնդվի ու զարգանա Սովետական Միության և Չինաստանի ժողովուրդների մեծ ու անխորտակելի բարեկամությունը:

Գիրիկի գործարանի մասնագետներ՝

ՅԶՅԱՆ ՖՈՒ-ԽԵՆ

ԴԵՅ ԺԵՆ-ՉՈՒ

ՍՈՒՆ ԽՈՒՆՅ-ԺՈՒ

ԶԵՆ ՑՈՒՆ-ՍՅԱՆ

ՅՈՒՅ ԼՅԱՆ-ՑԶԻ

ԼԻ ՅԱՆ-ԴԵ

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, 5 մարտի 1955 թ.)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՈՒ ԵՐԱՇՇՏԱԳԵՏՆԵՐԻ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարտի 17-ից մինչև 19-ը Երևանում հյուր էր Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի կոմպոզիտորների ու երաժշտագետների դելեգացիան, որը Սովետական Միություն է ժամանել ՍՍՄԿ Կուլտուրայի մինիստրության և ՍՍՄԿ Սովետական կոմպոզիտորների միության հրավերով: Հայաստանի մայրաքաղաքում հյուրերը ծանոթացան երաժշտական կրթության դրվածքին, այցելեցին կուլտուր-լուսավորական հիմնարկները, դիտեցին քաղաքի տեսարժան վայրերը:

Դելեգացիայի Թերիլսի մեկնեցուց առաջ Հայաստանի հեռագրական գործակալության թղթակիցը դիմեց դելեգացիայի ղեկավարին՝ Գերմանական կոմպոզիտորների ու երաժշտագետների միության նախագահ պրոֆեսոր Օտտեմար Գերստերին և այդ միության գլխավոր քարտուղար Նաթան Նոտովիչին, խնդրելով պատմել Երևանում իրենց ստացած տպավորությունների մասին:

— Մենք Հայաստան ժամանեցինք տարվա հիանալի եղանակին: Երևանը մեզ դիմավորեց արթնացող բնության բուրմունքով, զբոսայգիների ու պուրակների նոր կանաչով:

Ձեր քաղաքը իր վաղ-գարնանային զգեստի մեջ մեզ վրա անջնջելի տպավորություն թողեց: Կառուցողների հմուտ ձեռքերով Երևանի ուղղաձիգ և լայն փողոցները զարդարվել են մոնումենտալ շենքերով: Ձեզ մոտ կառուցում են համոզեց, ճաշակով:

Մենք երկար ժամանակ հիանում էինք Լեհինի հրապարակով, որը արդեն այժմ կարող

է դասվել եվրոպական բազմաթիվ մեծ քաղաքների լավագույն հրապարակների շարքը:

Երևանը մեծ ապագա ունեցող քաղաք է: Այն արագորեն աճում և կառուցվում է:

Մենք Հայաստանում մնացինք երեք օրից էլ պակաս: Մեր ժամանակի մեծ մասը նվիրեցինք հայ ժողովրդի կուլտուրական կյանքին ծանոթանալուն: Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի պետական թատրոնում մենք ներկա եղանք երկու ներկայացման: Այստեղ լսեցինք «Ալմաստ» ազգային օպերան, որ գրել է հայկական երաժշտության կրասիկ Ալեքսանդր Սպենդիարյանը: Մենք զգացինք Սպենդիարյանի հիանալի երաժշտության խորությունը, նրա մեղեդիների ժողովրդայնությունը:

Մենք նկատեցինք ժողովրդի մեծ սերը օպերային արվեստի նկատմամբ: Դա իր վառ արտացոլումն է գտել նաև թատրոնի ռեպերտուարում: Այստեղ բեմադրվում են նաև արևմտաեվրոպական երաժշտության կրասիկների ստեղծագործությունները: Թատրոնի երգիչների ու նվագախմբի կատարմամբ լավ հնչեց Ռոսսինիի «Սեվիլյան սափրիչ» օպերան:

Հայաստան ժամանելիս մենք արդեն որոշ պատկերացում ունեինք հայկական երաժշտության մասին: Մեր հայրենիքում մենք լսել ենք Ա. Խաչատրյանի, Ա. Հարությունյանի, Ա. Բաբաջանյանի և ուրիշ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Այստեղ մենք հա-

մոզվեցինք հայ ժողովրդի մեծ երաժշտական ունեւթյան մեջ, ժողովուրդ, որը Սովետական իշխանության տարիներին ստեղծել է նոր, կենսուրախ շատ երգեր: Այդ երգերը մենք լսեցինք հայկական երգի ու պարի վաստակավոր անսամբլի հիանալի կատարմամբ: Ազատ ու երջանիկ հայ ժողովուրդը նրանցում գովերգում է իր սերը Հայրենիքի նկատմամբ, ժողովուրդների բարեկամությունը, իր նվաճումները: Բայց ոչ միայն երգերն են հուզիչ և լիրիկական հնչում այդ համերաշխ կուլեկտիվի կատարմամբ: Անսամբլի զարդն են հանդիսանում նաև պարերը, որոնք սկիզբ են առնում հայկական բազմադարյան արվեստի ակունքներից:

Մեր դեկորացիան երաժշտական կրթության դրվածքին ծանոթանալու համար այցելեց Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, Չայկովսկու անվան երաժշտական տասնամյա դպրոցը, Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը:

Արժեքավոր է այն, որ երաժշտական դրվածքների սովորողները ուսման հետ միաժամանակ մասնակցում են երգեցիկ խմբերի, նվագախմբերի աշխատանքին:

Հայաստանում երաժշտական կրթության գործը լավ է դրված: Ինչպես մեզ պատմեցին, երաժշտական դպրոցներ կան ոչ միայն Երևանում, այլև Ռեսպուբլիկայի մյուս քաղաքներում և շրջաններում:

Մենք էջմիածնում աշխույժ հետաքրքրությամբ դիտեցինք հին հուշարձանները, որոնք վկայում են հայ ժողովրդի բազմադարյան հարուստ կուլտուրան:

Մենք Հայաստանից մեկնում ենք՝ լի ձերարեաշող երկրի մասին ջերմ ու վառ տպավորություններով, սիրալիր հյուրընկալության համար մեծ շնորհակալության զգացմունքով:

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
օրաթերթ, 23 մարտի 1955 թ.)

